ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Բոլորից Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Տիգրանի Երեմյանի 60 տարին։

Ականավոր սովետահայ պատմաբանը մեծ ներդրում է արել հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրման բնագավառում։ Նա է բացահայտել ու հետազոտել հին Հայաստանի հասարակարգը։ Հետևելով նախասովետական շրջանում ստեղծված տեսակետին, սովետական պատմաբանները նախապես ֆեոդալական կարգեր էին վերագրում հին Հայաստանին, չտարբերելով այդպիսով նրան սոցիալ-տնտեսական առումով միջնադարյան Հայաստանից։ Ս. Երեմյանը պատմական, հնագիտական, ազգագրական, լեզվական և ուրիշ բազմաթիվ նյութերի հիման վրա ցույց տվեց, որ հին Հայաստանում գոյություն են ունեցել այլ, այն է՝ ստրկատիրական կարգեր, որոնց ընդերքում էլ կազմավորվել է հետագայում հաստատված ֆեոդալիզմը։ Ս. Երեմյանի հետազոտությունները լուսաբանում են, այսպիսով, նաև Հայաստանում ֆեոդալիզմի ծագման խնդիրը։

Մեծ նշանակություն ունեն նաև միջնադարյան Հայաստանի պատմության խնդիրներին նվիրված նրա աշխատությունները։ Ս. Երեմյանը վրաց պատմության և վրացերենի փայլուն գիտակ է, և այս հանգամանքը իր դրոշմն է դնում նրա՝ միջնադարին նվիրված հետազոտությունների վրա. դրանց մեջ հանգամանորեն լուսաբանվում են հայ և վրաց ժողովուրդների միջև գոյություն ունեցած բազմաբնույթ ու տնտեսական սերտ առնչությունները, նրանց փոխազդեցությունը և որոշ պատմական փուլերում միասնական պարպացման հանգեցնող նրանց փոխադարձ կապերը։

Ս. Երեմյանի պատմական ուսումնասիրությունների առանձնահատկություններից մեկն է աշխարհագրական նյութերի լայն և հմուտ օգտագործումը։ Այդ նյութը, որին սովորաբար սոսկ օժանդակ դեր է հատկացվում, բառացիորեն տոգորում է Ս. Երեմյանի հետազոտությունները և ծառայում կարևորագույն հարցերի ու պրոբլեմների պարզաբանման։ Ցցուն օրինակ է հայ ժողո-

վրրդի ծագման պրոբլեմը, որն իր հետաքրքրական լուծումն է ստացել Ս. Երեմյանի մի շարք աշխատություններում։

Ս. Երեմյանի գործունեության առանձին և առավել փայլուն բնագավառն է հանդիսանում Հայաստանի և Կովկասի պատմական աշխարհագրությունն ու բարտեզագրությունը։ Այստեղ Ս. Երեմյանը եղակի մասնագետ է. նա կազմել է հարյուրավոր բարտեզներ, որոնցում արտացոլվել են նրա պատմա-աշխարհագրական իսկապես որ անգուգական գիտելիքները։ Ս. Երեմյանի՝ պատմական աշխարհագրության հարցերին նվիրված հետազոտությունները և կազմած բարտեզները իսկական հեղաշրջում են հայտանշում հայագիտության այդ մարզում, և հասցրել են այն համաշխարհային գիտության նվաճումների բարձրագույն մակարդակին։ Հատկապես պետք է նշել նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի աշխատությունը, որը հրատարակվելուն պես անհրաժեշտ դարձավ յուրաքանչյուր հայագետի։ Այդ գրքին ու նրան կից քարտեզին են դիմում այսօր ոչ միայն պատմաբաններն ու աշխարհագետները, այլև բանաստեղծները, ազգագրագետները, լեզվաբանները, կենդանաբանները, երկրաբանները, բուսաբանները և այլք, հարուստ նյութ գտնելով այնտեղ իրենց ուսումնասիրությունների համար։ Այդ գրքում լուսաբանված են նաև պատմական Հայաստանում աշխարհագրական գիտության զարգացման ուղիները, հատկապես հայկական պատմա-աշխարհագրական ավանդույթի սերտ կապը անտիկ աշխարհագրության հետ։

Ս. Երեմյանի աշխատությունները բարձր համարում ունեն Սովետական Միության մեջ. հազիվ թե գտնվի այնպիսի մի ընդհանրացնող հրատարակություն, որի մեջ օգտագործված չլինեն նրա տեքստերը կամ քարտեզները, այն էլ ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների վերաբերյալ։ Դրանցից են օրինակ, «Համաշխարհային պատմություն», «ՍՍՀՄ պատմության ակնարկներ», «Կովկասի ժողովուրդները», «Պատմական հանրագիտարան» հրատարակությունները։ Քաջ հայտնի են Ս. Երեմյանի գործերը նաև արտասահմանում։ Նա ներկայացրել է սովետական գիտությունը արևելագետների 23-րդ և 25-րդ միջազգային համագումարներում, բյուզանդագետների 13-րդ միջազգային համագումարում և այլն։

Մեծ են Ս. Երեմյանի ծառայությունները նաև դիտակազմակերպչական բնագավառում։ Մի շարք տարիներ նա եղել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր և նույն ինստիտուտի հին և միջնադարյան պատմության սեկտորն է ղեկավարել։ Նրա հատուկ ներդրումն այս բնագավառում Հայաստանի հին և միջնադարյան պատմության բարձրորակ մասնագետների դաստիարակումն է, մասնագետներ, որոնց տեսական ու լեզվական գիտելիքների բարձր մակարդակը հնարավորություն է տալիս մերձենալ հայ ժողովրդի պատմության ամենաբարդ խնդիրներին, սպառիչ կերպով ներդրավելով գոյություն ունեցող սկզբնաղբյուրները՝ իրենց լեզուներով։

Ս. Երեմյանը կենսական ու գիտական լայն շահագրգռությունների տեր անձնավորություն է։ Նրա անձնական հատկությունները՝ համեստությունը, օգնելու, օժանդակելու պատրաստակամությունն ու կարողությունը, նրա հոգատարությունը երիտասարդ կադրերի նկատմամբ—այս բոլորը հիմքն են այն սիրո և հարգանքի, որ վայելում է նա մեր հասարակայնության մեջ։

Ս. Երեմյանը իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում է։ Սովետական գիտությունը դեռևս շատ սպասելիքներ ունի նրանից։